Օպերատիվ շտաբի հայտարարություն

Օպերատիվ շտաբը հրավիրում է բնակելի շենքերի կառուցապատում իրականացնող ընկերություններին մասնակցելու ՀՀ կառավարության կողմից իրականացվող ծրագրին, համաձայն որի գրավի դիմաց ՀՀ կառավարությունը կառուցապատողներին տրամադրելու է վարկային երաշխիքներ՝ կիսավարտ բնակելի շինարարական օբյեկտներն ավարտելու նպատակով: Որպես գրավ ընդունվում է այլ պարտավորություններով չծանրաբեռնված անշարժ գույքը:

Տրամադրվող երաշխիքի գումարը չի գերազանցելու գրավադրվող անշարժ գույքի շուկայական գնի 35%-ը: Անշարժ գույքի շուկայական գինը որոշելիս հիմք է ընդունվելու 2 անկախ գնահատող ընկերությունների (ըստ կից ներկայացված ցանկի) կողմից տրված շուկայական գների նվազագույնը: Պետական երաշխիքը կարող է տրամադրվել մինչև 3 տարի ժամկետով: Տրամադրվող երաշխիքի գումարն այլ տեսակի գրավի դիմաց (բանկերում հաշիվների մնացորդը, ոսկու ստանդարտացված ձուլակտորները, BBB- վարկանիշից բարձր վարկանիշ ունեցող բանկերի երաշխիքը), ելնելով իրացվելիության աստիճանից, կարող է հասնել գրավադրվող գույքի շուկայական գնի մինչև 100%-ը:

Վարկային երաշխիքը տրամադրվելու է պահանջվող վարկի միայն մայր գումարի համար:

Կառուցապատողներին ներկայացվող պահանջները.

1. Առևտրային բանկը պատրաստ է վարկավորել կառուցապատողին պետական երաշխիքի առկայության պարագայում, ինչը հավաստվում է առևտրային բանկի կողմից պաշտոնական գրությամբ:
2. Կառուցապատման ենթակա օբյեկտի պատրաստվածության աստիճանը պետք է լինի առնվազն 75%, ինչը հավաստվում է գույքը գնահատող ընկերությունների կողմից:

Առաջարկվող երաշխիքների ընդհանուր գումարը կազմում է 20 մլրդ դրամ: Պահանջները բավարարող հայտերի հանրագումարը 20 մլրդ գումարը գերազանցելու դեպքում նախապատվությունը տրվելու է այն կառուցապատողներին, որոնց շինարարական օբյեկտների ավարտման աստիճանը առավելագույնն է և որոնց կառույցի 1 քառ.մ շուկայական արժեքը նվազագույնն է:

Կառուցապատողն օպերատիվ շտաբին պետք է ներկայացնի ըստ կից ներկայացվող փաստաթղթերի ամբողջական ցանկը:

Օպերապիվ շտաբն իրավունք է վերապահում կառուցապատողների կողմից ներկայացված տվյալները, ինչպես նաև գնահատողներից ստացված գնահատականները լրացուցիչ փորձաքննության ենթարկել:

Դիմումներն ընդունվում են սկսած 2009 թվականի ապրիլի 14-ից՝ հետևյալ հասցեով՝ Հայաստանի Հանրապետություն, 0010, քաղ. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն, 1, Օպերատիվ Շտաբ: Լրացուցիչ տեղեկություններ (պարզաբանումներ) ստանալու համար կարող եք զանգահարել (010) 52-92-39 հեռախոսահամարով կամ նամակ ուղղել հետևյալ էլեկտրոնային հասցեով. opetativ@gov.am:

Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ

Հ/հ	Անվանումը
	Հիմնադիր փաստաթղթերի ցանկ
1.	Դիմում - հայտ
2.	Կանոնադրության պատճեն
3.	Պետռեգիստրի վկայականի պատճեն
4.	ՀՎՀՀ (հարկային կոդ)
5.	Կանոնադրական կապիտալում 10% և ավելի մասնակցություն ունեցող ֆիզիկական անձանց, տնօրենի և գլխավոր հաշվապահի անձնագրերի պատճենները, իրավաբանական անձ հանդիսացող մասնակիցների կանոնադրությունը, ռեգիստրի վկայականը, տնօրենի անձնագրի պատճեն
6.	ՍՊԸ-ի դեպքում՝ Բաժնեմասի սեփականության վերաբերյալ պետ. ռեգիստրի կողմից տրված տեղեկանքը, ԲԲԸ-ի դեպքում՝ տեղեկանք պետական դեպոզիտարիայից, ՓԲԸ-ի դեպքում՝ քաղվածք ռեեստրից
7.	Ընդհանուր ժողովի որոշումը բանկից վարկ վերցնելու և գույքը գրավադրելու վերաբերյալ, ըստ անհրաժեշտության
8.	Որպես գրավ առաջարկվող միջոցների (անշարժ գույք) ցանկը, գրավի առարկայի ծագումն ու դրա նկատմամաբ սեփականության, ինչպես նաև այլ իրավունքներ հաստատող փաստաթղթեր
9.	Արտոնագրեր (արտոնագրված գործունեության համար)
10.	Ֆինանսական հաշվետվությունները՝ համաձայն ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից հաստասված ձևերի, վերջին հաշվետու ժամանակահատվածի համար՝ հաստատված հարկային տեսչության կողմից
11.	Հարկային պետական ծառայությունից տեղեկանքներ պարտք ու պահանջի վերաբերյալ
12.	Կազմակերպության գործունեության հետ կապված պայմանագրեր՝ վարձակալության, բացառիկ ներկայացուցչական, կառուցապատվող օբյեկտների տարածքների վաճառքի կամ նախնական վաճառքի պայմանագրերի պատճենները
13.	Անհրաժեշտության դեպքում նաև այլ փաստաթղթեր
14.	Առաջարկվող գրավի գնահատման ակտ՝ ընտրված գնահատող ընկերությունների կողմից
	Տեղեկություններ կառուցապատողի գործունեության վերաբերյալ
1.	Բանկերում հաշիվների շարժը (նախորդ տարվա և ընթացիկ ժամանակաշրջանի

	համար)՝ բանկի քաղվածքի տեսքով
2.	Բանկերում աշխատող վարկերի, ինչպես նաև փոխառությունների պայմանագրերի պատճենները, մնացորդը տվյալ պահին
3.	Շրջանառության տարեկան ծավալները ըստ ամիսների (նախորդ տարվա և ընթացիկ ժամանակաշրջանի համար)
4.	Ընկերության ծախսերը ըստ հոդվածների ըստ ամիսների (նախորդ տարվա և ընթացիկ ժամանակաշրջանի համար)
5.	Դեբիտորական և կրեդիտորական պարտքի մնացորդը, ըստ դեբիտորների և կրեդիտորների անվանացանկի, մարման ժամկետները և գրաֆիկը
6.	Իրացման / մատակարարաման պայմանագրեր, հայտ-պատվերներ, հաշիվ-ապրաքագրեր, վաճառքների կանոնավոր գործընթաց հաստատող այլ փաստաթղթեր
7.	Կանխատեսվող մուտքերը և հնարավոր ծախսերը
8.	Այլ փաստաթղթեր ըստ պահանջի

ԳՆԱՀԱՏՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

NN	Կազմակերպ. անվանումը	Հասցեն	Հեռ. համարը
1	«Ալտա Վիպ» ՍՊԸ	Ք. Երևան, Գ. Լուսավորիչ 17 շ. 17 բն	52 19 30 58 61 30
2	«Տիգրիս» ՍՊԸ	Ք. Երևան, փ. Թումանյան 8շենք, 415 սենյակ	52 85 69
3	«ԱԳ Բորսա» ՍՊԸ	Ք. Երևան, փ. Նաիրի Զարյան 22ա	25 27 89
4	Զարգացման ուղիներ	Ք. Երևան, փ. Բագրատունյաց 27/1	42 75 58 091 41 75 65 093 07 13 53
5	«Դեմարկո» ՍՊԸ	Ք. Երևան, փ. Տիգրան Մեծի 32/1, 2 սենյակ	56 69 69
6	Պարտեր	Ք. Երևան, փ. Բյուզանդի 1/3	54 55 08 54 54 71 093 66 59 85
7	«Էսկո-կոնցեռն» ՓԲԸ	Ք. Երևան, փ. Սայաթ-Նովա 13	52 03 02 58 02 30
8	ԱՆՏ ռիելթի ՍՊԸ	Ք.Երևան, Տիգրան Մեծ պ. 39շ.	54 25 32
9	«Օլիվեր Գրուփ»	Ք. Երևան, փ. Թումանյան 8, 427-428	54 27 40 54 27 60